



Կադաստրի  
կոմիտե

# Անշարժ գույքի շուկայի վերլուծություն

2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե  
[www.cadastre.am](http://www.cadastre.am)

# Բովանդակություն

1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ.....	2
1.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն.....	2
1.2	Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն.....	9
1.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն ..	13
2	ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ.....	15
2.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն.....	15
3	ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ.....	20
3.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն.....	20
3.2	Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն.....	24
3.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն.....	26
3.4	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն.....	28
3.5	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն.....	31
3.6	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն.....	36
3.7	Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն ..	42
4	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ.....	48
4.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն.....	48
4.2	Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն.....	52
4.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն.....	55
5	ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ.....	57
5.1	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն.....	57
5.2	Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն.....	61
5.3	Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն.....	63
5.4	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված հիփոթեքային գրավադրման գործարքների վերլուծություն.....	65

# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2024 թվականի օգոստոսին (վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է՝ հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոս ամսվա ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները և անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները:


## 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

### 1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 20,178 իրավունքի պետական գրանցման գործարք:

2010-2024 թվականների օգոստոս ամսվա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են Գծապատկեր 1.1-1-ում.


Գծապատկեր 1.1-1




1.1.2 Հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 26.9 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց ձորի մարզում՝ 2.2 %:

Գծապատկեր 1.1-2-ում և Գծապատկեր 1.1-3-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի:

Գծապատկեր 1.1-2



Գծապատկեր 1.1-3




Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-1

	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
Երևան	5,361	1.1%	5,418	-6.4%	5,791
Արագածոտն	1,399	6.4%	1,488	12.1%	1,327
Արարատ	1,687	4.9%	1,770	-3.6%	1,836
Արմավիր	1,645	2.2%	1,681	-6.1%	1,790
Գեղարքունիք	1,159	19.4%	1,384	7.2%	1,291
Լոռի	1,155	1.7%	1,175	-5.6%	1,245
Կոտայք	3,863	-12.5%	3,380	-11.7%	3,829
Շիրակ	874	27.0%	1,110	16.8%	950
Սյունիք	784	-1.7%	771	-25.1%	1,029
Վայոց ձոր	400	11.0%	444	-15.7%	527
Տավուշ	894	74.2%	1,557	-20.9%	1,969
<b>Հանրապետություն</b>	<b>19,221</b>	<b>5.0%</b>	<b>20,178</b>	<b>-6.5%</b>	<b>21,584</b>

Գծապատկեր 1.1-4-ում ներկայացված է 2010-2024 թվականների օգոստոս ամսվա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ըստ Երևան քաղաքի, մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի:

Գծապատկեր 1.1-4




2024 թվականի օգոստոսին հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2024 թվականի հուլիսի համեմատ նվազել է 6.5 %-ով, իսկ 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ աճել 5.0 %-ով: Երևան քաղաքում 2024 թվականի օգոստոսին գրանցված

գործարքների քանակը 2024 թվականի հուլիսի համեմատ նվազել է 6.4 %-ով, իսկ 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ աճել 1.1 %-ով: Մարզերի քաղաքային բնակավայրերում 2024 թվականի օգոստոսին գրանցված գործարքների քանակը 2024 թվականի հուլիսի համեմատ նվազել է 3.2 %-ով, 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ 4.1 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2024 թվականի օգոստոսին գրանցված գործարքների քանակը 2024 թվականի հուլիսի համեմատ նվազել է 8.1 %-ով, 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ աճել 12.7 %-ով:

1.1.3 Հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.3 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.3 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:


Գծապատկեր 1.1-5-ում և Գծապատկեր 1.1-6-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.1-5



Գծապատկեր 1.1-6

Հանրապետությունում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-2

Ը/Ը	Գործարքի տեսակ	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
1	<b>Օտարում</b>	7,414	1.5%	7,524	1.3%	7,427
1ա	Առուվաճառք	4,448	8.4%	4,822	-2.4%	4,939
1բ	Նվիրատվություն	2,662	-8.3%	2,441	9.4%	2,231
1գ	Փոխանակում	39	-23.1%	30	-46.4%	56
1դ	Օտարման այլ տեսակ	265	-12.8%	231	14.9%	201
2	<b>Վարձակալություն</b>	799	6.6%	852	-16.5%	1,020
3	<b>Գրավադրում</b>	2,535	20.9%	3,065	2.1%	3,002
4	<b>Ժառանգություն</b>	3,328	-2.9%	3,231	-8.3%	3,523
5	<b>Օրինականացում</b>	356	-25.3%	266	2.3%	260
6	<b>Առաջնային գրանցում</b>	3,063	14.4%	3,505	-19.9%	4,376
7	<b>Պետգր. /վերագրանցում/</b>	1,726	0.5%	1,735	-12.2%	1,976
	<b>Ընդամենը /գործարք/</b>	<b>19,221</b>	<b>5.0%</b>	<b>20,178</b>	<b>-6.5%</b>	<b>21,584</b>


Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների:

Գործարքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	<b>Օտարում</b>	7,524	37.3%	2,105	38.9%	28.0%	1,922	39.2%	25.5%	3,497	35.5%	46.5%
1ա	Առուվանձնաք	4,822	23.9%	1,302	24.0%	27.0%	1,266	25.8%	26.3%	2,254	22.9%	46.7%
1բ	Նվիրատվություն	2,441	12.1%	720	13.3%	29.5%	591	12.0%	24.2%	1,130	11.5%	46.3%
1գ	Փոխանակում	30	0.1%	8	0.1%	26.7%	7	0.1%	23.3%	15	0.2%	50.0%
1դ	Օտարման այլ տեսակ	231	1.1%	75	1.4%	32.5%	58	1.2%	25.1%	98	1.0%	42.4%
2	<b>Վարձակալություն</b>	852	4.2%	460	8.5%	54.0%	145	3.0%	17.0%	247	2.5%	29.0%
3	<b>Գրավադրում</b>	3,065	15.2%	1,352	25.0%	44.1%	677	13.8%	22.1%	1,036	10.5%	33.8%
4	<b>Ժառանգություն</b>	3,231	16.0%	512	9.4%	15.8%	712	14.5%	22.0%	2,007	20.4%	62.1%
5	<b>Օրինականացում</b>	266	1.3%	71	1.3%	26.7%	69	1.4%	25.9%	126	1.3%	47.4%
6	<b>Առաջնային գրանցում</b>	3,505	17.4%	512	9.4%	14.6%	962	19.6%	27.4%	2,031	20.6%	57.9%
7	<b>Պետգր. /վերագրանցում/</b>	1,735	8.6%	406	7.5%	23.4%	419	8.5%	24.1%	910	9.2%	52.4%
<b>Ընդամենը /գործարք/</b>		<b>20,178</b>	<b>100.0%</b>	<b>5,418</b>	<b>100.0%</b>	<b>26.9%</b>	<b>4,906</b>	<b>100.0%</b>	<b>24.3%</b>	<b>9,854</b>	<b>100.0%</b>	<b>48.8%</b>


1.1.4 Հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 42.2%, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 2.3 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-7-ում և Գծապատկեր 1.1-8-ում ներկայացված են 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.1-7







Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-4

Ը/Ը	Գույքի տեսակ	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
1	Բնակարան	4,848	-2.7%	4,716	-5.1%	4,972
2	Անհատական բնակելի տուն	4,576	-1.2%	4,523	-3.7%	4,698
3	Արտադրական նշ. շին	358	27.9%	458	17.1%	391
4	Հասարակական նշ. շին.	1,421	-7.0%	1,321	-11.2%	1,488
5	Ավտոտնակ	695	-6.0%	653	-33.0%	975
6	Հող	7,323	16.2%	8,507	-6.1%	9,060
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	4,060	2.5%	4,160	-8.5%	4,545
<b>Ընդամենը</b>		<b>19,221</b>	<b>5.0%</b>	<b>20,178</b>	<b>-6.5%</b>	<b>21,584</b>

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 1.1-5

Գույքի տեսակ	Հանրապետություն	Երևան	Մարզերի քաղաքային բնակավայրեր	Գյուղական բնակավայրեր
--------------	-----------------	-------	-------------------------------	-----------------------


		քանակ	%	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	4,716	23.4%	2,971	54.8%	63.0%	1,589	32.4%	33.7%	156	1.6%	3.3%
2	Անհատական բնակելի տուն	4,523	22.4%	867	16.0%	19.2%	1,100	22.4%	24.3%	2,556	25.9%	56.5%
3	Արտադրական նշ. շին	458	2.3%	200	3.7%	43.7%	88	1.8%	19.2%	170	1.7%	37.1%
4	Հասարակական նշ. շին.	1,321	6.5%	712	13.1%	53.9%	435	8.9%	32.9%	174	1.8%	13.2%
5	Ավտոտնակ	653	3.2%	340	6.3%	52.1%	276	5.6%	42.3%	37	0.4%	5.7%
6	Հող	8,507	42.2%	328	6.1%	3.9%	1,418	28.9%	16.7%	6,761	68.6%	79.5%
ճա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	4,160	20.6%	51	0.9%	1.2%	377	7.7%	9.1%	3,732	37.9%	89.7%
	<b>Ընդամենը /գործարք/</b>	<b>20,178</b>	<b>100.0%</b>	<b>5,418</b>	<b>100.0%</b>	<b>26.9%</b>	<b>4,906</b>	<b>100.0%</b>	<b>24.3%</b>	<b>9,854</b>	<b>100.0%</b>	<b>48.8%</b>

## 1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Արարկիր՝ 16.2%, իսկ ցածրը՝ 0.9%, Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Երևան քաղաքում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների



Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
Դավթաշեն	214	57.9%	338	50.9%	224
Էրեբունի	345	-1.4%	340	-4.0%	354
Աջափնյակ	622	-13.0%	541	-16.6%	649
Ավան	198	14.6%	227	7.1%	212
Արաբկիր	867	1.0%	876	-18.3%	1,072
Կենտրոն	1,037	-17.8%	852	-19.9%	1,064
Մալաթիա-Սեբաստիա	581	10.0%	639	-8.5%	698
Քանաքեռ-Զեյթուն	314	22.3%	384	39.6%	275
Շենգավիթ	496	25.4%	622	3.8%	599
Նոր Նորք	511	-6.1%	480	-4.8%	504
Նորք-Մարաշ	134	-47.0%	71	-25.3%	95
Նուբարաշեն	42	14.3%	48	6.7%	45
<b>Երևան</b>	<b>5,361</b>	<b>1.1%</b>	<b>5,418</b>	<b>-6.4%</b>	<b>5,791</b>

1.2.2 Երևան քաղաքում 2024 թվականի օգոստոսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.9 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.3 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 1.2-2

Ը/Ը	Գործարքի տեսակ	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
1	<b>Օտարում</b>	2,076	1.4%	2,105	1.0%	2,084
1ա	Առուվաճառք	1,273	2.3%	1,302	-1.7%	1,325
1բ	Նվիրատվություն	731	-1.5%	720	7.9%	667
1գ	Փոխանակում	13	-38.5%	8	-50.0%	16
1դ	Օտարման այլ տեսակ	59	27.1%	75	-1.3%	76
2	<b>Վարձակալություն</b>	486	-5.3%	460	-12.2%	524
3	<b>Գրավադրում</b>	1,136	19.0%	1,352	3.4%	1,307
4	<b>Ժառանգություն</b>	604	-15.2%	512	-13.9%	595
5	<b>Օրինականացում</b>	77	-7.8%	71	2.2 անգամ	33
6	<b>Առաջնային գրանցում</b>	623	-17.8%	512	-38.8%	836
7	<b>Պետգր. /վերագրանցում/</b>	359	13.1%	406	-1.5%	412
	<b>Ընդամենը /գործարք/</b>	<b>5,361</b>	<b>1.1%</b>	<b>5,418</b>	<b>-6.4%</b>	<b>5,791</b>

1.2.3 Երևան քաղաքում 2024 թվականի օգոստոսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 54.8 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 3.7 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.2-3



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոսի և 2024 թվականի հուլիսի ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-3


Ը/Ը	Գույքի տեսակ	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
1	Բնակարան	2,923	1.6%	2,971	-7.3%	3,205
2	Անհատական բնակելի տուն	885	-2.0%	867	5.9%	819
3	Արտադրական նշ. շին	124	61.3%	200	62.6%	123
4	Հասարակական նշ. շին.	707	0.7%	712	-12.3%	812
5	Ավտոտնակ	339	0.3%	340	-34.5%	519
6	Հող	383	-14.4%	328	4.8%	313
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	50	2.0%	51	-1.9%	52
<b>Ընդամենը</b>		<b>5,361</b>	<b>1.1%</b>	<b>5,418</b>	<b>-6.4%</b>	<b>5,791</b>

### 1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 2024 թվականի օգոստոսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 36.7 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.3 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.3-1



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոսի և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 1.3-1

Ը/Ը	Գործարքի տեսակ	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
1	<b>Օտարում</b>	5,338	1.5%	5,419	1.4%	5,343
1ա	Առուվաճառք	3,175	10.9%	3,520	-2.6%	3,614
1բ	Նվիրատվություն	1,931	-10.9%	1,721	10.0%	1,564
1գ	Փոխանակում	26	-15.4%	22	-45.0%	40
1դ	Օտարման այլ տեսակ	206	-24.3%	156	24.8%	125
2	<b>Վարձակալություն</b>	313	25.2%	392	-21.0%	496
3	<b>Գրավադրում</b>	1,399	22.4%	1,713	1.1%	1,695
4	<b>Ժառանգություն</b>	2,724	-0.2%	2,719	-7.1%	2,928
5	<b>Օրինականացում</b>	279	-30.1%	195	-14.1%	227
6	<b>Առաջնային գրանցում</b>	2,440	22.7%	2,993	-15.5%	3,540
7	<b>Պենագր. /վերագրանցում/</b>	1,367	-2.8%	1,329	-15.0%	1,564
	<b>Ընդամենը /գործարք/</b>	<b>13,860</b>	<b>6.5%</b>	<b>14,760</b>	<b>-6.5%</b>	<b>15,793</b>

1.3.2 Մարզերում 2024 թվականի օգոստոսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 55.4 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.7 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.3-4



Աղյուսակ 1.3-4-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոսի և 2024 թվականի հուլիսի ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-4

Ը/Ը	Գույքի տեսակ	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
1	Բնակարան	1,925	-9.4%	1,745	-1.2%	1,767
2	Անհատական բնակելի տուն	3,691	-0.9%	3,656	-5.7%	3,879
3	Արտադրական նշ. շին	234	10.3%	258	-3.7%	268
4	Հասարակական նշ. շին.	714	-14.7%	609	-9.9%	676
5	Ավտոտնակ	356	-12.1%	313	-31.4%	456
6	Հող	6,940	17.9%	8,179	-6.5%	8,747
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	4,010	2.5%	4,109	-8.5%	4,493
<b>Ընդամենը</b>		<b>13,860</b>	<b>6.5%</b>	<b>14,760</b>	<b>-6.5%</b>	<b>15,793</b>


## 2 ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

### 2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 7,524 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 37.3 %-ը:

2010-2024 թվականների օգոստոս ամսվա անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 2.1-1-ում.

Գծապատկեր 2.1-1




2.1.2 Հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 28.0 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.6 %՝ Վայոց ձորի մարզում:

Գծապատկեր 2.1-2-ում և Գծապատկեր 2.1-3-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի:




Հանրապետությունում օտարման գործարքների տոկոսային բաշխվածությունը



Գծապատկեր 2.1-3

Հանրապետությունում օտարման գործարքների քանակական բաշխվածությունը



Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:

	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
Երևան	2,076	1.4%	2,105	1.0%	2,084
Արագածոտն	488	23.4%	602	15.3%	522
Արարատ	619	9.0%	675	6.5%	634
Արմավիր	668	-5.1%	634	-2.5%	650
Գեղարքունիք	476	-16.4%	398	7.6%	370
Լոռի	473	7.6%	509	24.8%	408
Կոտայք	1,584	-12.8%	1,381	3.7%	1,332
Շիրակ	312	14.1%	356	8.9%	327
Սյունիք	225	20.0%	270	-21.3%	343
Վայոց ձոր	145	-15.2%	123	-28.5%	172
Տավուշ	348	35.3%	471	-19.5%	585
<b>Հանրապետություն</b>	<b>7,414</b>	<b>1.5%</b>	<b>7,524</b>	<b>1.3%</b>	<b>7,427</b>

2024 թվականի օգոստոսին հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2024 թվականի հուլիսի համեմատ աճել է 1.3 %-ով, 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ 1.5 %-ով, Երևան քաղաքում 2024 թվականի հուլիսի համեմատ աճել է 1.0 %-ով, 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ 1.4 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2024 թվականի հուլիսի համեմատ աճել է 6.7 %-ով, 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ նվազել 2.9 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2024 թվականի հուլիսի համեմատ նվազել է 1.2 %-ով, 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ աճել 4.1 %-ով:

2.1.3 Հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 44.2 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.2 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:


Գծապատկեր 2.1-4-ում և Գծապատկեր 2.1-5-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Հանրապետությունում օտարման գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Գծապատկեր 2.1-5

Հանրապետությունում օտարման գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի




Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Աղյուսակ 2.1-2

Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	2,107	28.0%	1,371	65.1%	65.1%	670	34.9%	31.8%	66	1.9%	3.1%
2	Անհատական բնակելի տուն	1,337	17.8%	250	11.9%	18.7%	339	17.6%	25.4%	748	21.4%	55.9%
3	Արտադրական նշ. շին	91	1.2%	17	0.8%	18.7%	32	1.7%	35.2%	42	1.2%	46.2%
4	Հասարակական նշ. շին.	275	3.7%	126	6.0%	45.8%	110	5.7%	40.0%	39	1.1%	14.2%
5	Ավտոտնակ	392	5.2%	240	11.4%	61.2%	133	6.9%	33.9%	19	0.5%	4.8%
6	Հող	3,322	44.2%	101	4.8%	3.0%	638	33.2%	19.2%	2,583	73.9%	77.8%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	1,481	19.7%	18	0.9%	1.2%	133	6.9%	9.0%	1,330	38.0%	89.8%
<b>Ընդամենը /գործարք/</b>		<b>7,524</b>	<b>100.0%</b>	<b>2,105</b>	<b>100.0%</b>	<b>28.0%</b>	<b>1,922</b>	<b>100.0%</b>	<b>25.5%</b>	<b>3,497</b>	<b>100.0%</b>	<b>46.5%</b>

Գծապատկեր 2.1-6-ում և Աղյուսակ 2.1-3-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

Գծապատկեր 2.1-6



Աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Մարզեր	Ընդամենը
Առուվաճառք	1,302	382	479	432	186	346	897	222	175	87	314	3,520	4,822
Նվիրատվություն	720	182	188	189	166	135	448	133	93	35	152	1,721	2,441
Փոխանակում	8	3	1	4	3	1	8	1	0	0	1	22	30
Օտարման այլ տեսակ	75	35	7	9	43	27	28	0	2	1	4	156	231
<b>Ընդամենը</b>	<b>2,105</b>	<b>602</b>	<b>675</b>	<b>634</b>	<b>398</b>	<b>509</b>	<b>1,381</b>	<b>356</b>	<b>270</b>	<b>123</b>	<b>471</b>	<b>5,419</b>	<b>7,524</b>


### 3 ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

#### 3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 4,822 գործարք :


2010-2024 թվականների օգոստոս ամսվա անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 3.1-1-ում.

Գծապատկեր 3.1-1




3.1.2 Հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 27.0 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.8 %՝ Վայոց Ձորի մարզում

Գծապատկեր 3.1-2-ում և Գծապատկեր 3.1-3-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.



Գծապատկեր 3.1-3




Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:

	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
Երևան	1,273	2.3%	1,302	-1.7%	1,325
Արագածոտն	314	21.7%	382	1.3%	377
Արարատ	385	24.4%	479	6.2%	451
Արմավիր	413	4.6%	432	-0.7%	435
Գեղարքունիք	134	38.8%	186	-9.7%	206
Լոռի	284	21.8%	346	30.6%	265
Կոտայք	1,100	-18.5%	897	-1.9%	914
Շիրակ	173	28.3%	222	1.8%	218
Սյունիք	138	26.8%	175	-25.8%	236
Վայոց ձոր	88	-1.1%	87	-23.7%	114
Տավուշ	146	2.2 անգամ	314	-21.1%	398
<b>Հանրապետություն</b>	<b>4,448</b>	<b>8.4%</b>	<b>4,822</b>	<b>-2.4%</b>	<b>4,939</b>

Գծապատկեր 3.1-4-ում ներկայացված է 2010-2024 թվականների օգոստոս ամսվա անշարժ գույքի նկատմամբ առուվաճառքի գրանցումների քանակները ըստ Երևան քաղաքի, մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի.

Գծապատկեր 3.1-4




2024 թվականի օգոստոսին հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2024 թվականի հուլիսի համեմատ նվազել է 2.4 %-ով, 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ աճել 8.4 %-ով, Երևան քաղաքում 2024 թվականի հուլիսի համեմատ նվազել է 1.7 %-ով, 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ աճել 2.3 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2024 թվականի հուլիսի համեմատ աճել է 4.1 %-ով, 2023

թվականի օգոստոսի համեմատ՝ 8.6 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2024 թվականի հուլիսի համեմատ նվազել է 6.0 %-ով, 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ աճել 12.2 %-ով:


3.1.3 Հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 48.9 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.1 %, արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-4-ում և Գծապատկեր 3.1-5-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների:

Գծապատկեր 3.1-4



Գծապատկեր 3.1-5





Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-2


Ը/Ը	Գույքի տեսակ	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
1	Բնակարան	1,234	0.0%	1,234	-5.3%	1,303
2	Անհատական բնակելի տուն	774	-17.7%	637	-4.1%	664
3	Արտադրական նշ. շին	41	34.1%	55	-3.5%	57
4	Հասարակական նշ. շին.	179	4.5%	187	14.0%	164
5	Ավտոտնակ	308	14.3%	352	-19.6%	438
6	Հող	1,912	23.3%	2,357	1.9%	2,313
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	1,016	-7.6%	939	-9.5%	1,038
<b>Ընդամենը</b>		<b>4,448</b>	<b>8.4%</b>	<b>4,822</b>	<b>-2.4%</b>	<b>4,939</b>

### 3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 19.7 %, արձանագրվել է Արաբկիր, իսկ առավել ցածրը՝ 0.8 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

Երևան քաղաքում առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների




Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
Դավթաշեն	49	2.5 անգամ	123	2.8 անգամ	44
Էրեբունի	74	-24.3%	56	-11.1%	63
Աջափնյակ	234	-51.7%	113	-45.7%	208
Ավան	42	11.9%	47	-2.1%	48
Արաբկիր	279	-7.9%	257	46.0%	176
Կենտրոն	168	11.9%	188	-6.9%	202
Մալաթիա-Սեբաստիա	100	91.0%	191	-18.0%	233
Քանաքեռ-Զեյթուն	92	-13.0%	80	86.0%	43
Շենգավիթ	92	19.6%	110	-35.7%	171
Նոր Նորք	113	-0.9%	112	3.7%	108
Նորք-Մարաշ	23	-39.1%	14	0.0%	14
Նուբարաշեն	7	57.1%	11	-26.7%	15
Երևան	1,273	2.3%	1,302	-1.7%	1,325

3.2.2 Երևան քաղաքում 2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 62.7 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 0.8 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի:



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 3.2-2


Ը/Ը	Գույքի տեսակ	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
1	Բնակարան	778	5.0%	817	-3.4%	846
2	Անհատական բնակելի տուն	149	-28.2%	107	-3.6%	111
3	Արտադրական նշ. շին	12	-16.7%	10	-37.5%	16
4	Հասարակական նշ. շին.	76	14.5%	87	22.5%	71
5	Ավտոտնակ	173	24.3%	215	2.4%	210
6	Հող	85	-22.4%	66	-7.0%	71
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	14	7.1%	15	-16.7%	18
<b>Ընդամենը</b>		1,273	2.3%	1,302	-1.7%	1,325

### 3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2024 թվականի օգոստոսին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 65.1 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.3 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոսի և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.3-1

Ը/Ը	Գույքի տեսակ	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
1	Բնակարան	456	-8.6%	417	-8.8%	457
2	Անհատական բնակելի տուն	625	-15.2%	530	-4.2%	553
3	Արտադրական նշ. շին	29	55.2%	45	9.8%	41
4	Հասարակական նշ. շին.	103	-2.9%	100	7.5%	93
5	Ավտոտնակ	135	1.5%	137	-39.9%	228
6	Հող	1,827	25.4%	2,291	2.2%	2,242
ճա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	1,002	-7.8%	924	-9.4%	1,020
<b>Ընդամենը</b>		<b>3,175</b>	<b>10.9%</b>	<b>3,520</b>	<b>-2.6%</b>	<b>3,614</b>


### 3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի 620 առուվաճառքի գործարքների կողմ հանդիսացել են իրավաբանական անձինք, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 12.9 %-ը :

Վերոնշյալ առուվաճառքի գործարքներից 135-ի դեպքում իրավաբանական անձինք հանդիսացել են միայն գնորդ, 451-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 34 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են իրավաբանական անձինք:

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված են իրավաբանական անձանց կողմից 2024 թվականի օգոստոսին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունները.


Գծապատկեր 3.4-1



Արդյունքում 2024 թվականի օգոստոսին իրավաբանական անձինք գնել են 169 միավոր անշարժ գույք և վաճառել են 485 միավոր անշարժ գույք:


Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է իրավաբանական անձանց կողմից 2024 թվականի օգոստոսին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.4-3-ում՝ իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

### Իրավաբանական անձանց կողմից գնված գույքերի բաշխվածությունը ըստ տեսակների



Գծապատկեր 3.4.3

### Իրավաբանական անձանց կողմից վաճառված գույքերի բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ Երևանի և մարզերի.

Աղյուսակ 3.4-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	1,302	34	20.1%	2.6%	363	74.8%	27.9%
Արագածոտն	382	27	16.0%	7.1%	2	0.4%	0.5%
Արարատ	479	8	4.7%	1.7%	4	0.8%	0.8%
Արմավիր	432	19	11.2%	4.4%	19	3.9%	4.4%
Գեղարքունիք	186	13	7.7%	7.0%	1	0.2%	0.5%
Լոռի	346	8	4.7%	2.3%	12	2.5%	3.5%
Կոտայք	897	36	21.3%	4.0%	46	9.5%	5.1%
Շիրակ	222	4	2.4%	1.8%	6	1.2%	2.7%
Սյունիք	175	8	4.7%	4.6%	5	1.0%	2.9%
Վայոց Ձոր	87	4	2.4%	4.6%	1	0.2%	1.1%
Տավուշ	314	8	4.7%	2.5%	26	5.4%	8.3%
Հանրապետություն	4,822	169	100.0%	3.5%	485	100.0%	10.1%

Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2024 թվականի հուլիսի նկատմամբ.

Աղյուսակ 3.4-2

	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք					Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք				
	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխում	2024 թվականի հուլիս	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
Երևան	48	-29.2%	34	-2.9%	35	328	10.7%	363	-21.9%	465
Արագածոտն	13	2.1 անգամ	27	3.8%	26	4	-50.0%	2	-66.7%	6
Արարատ	5	60.0%	8	-33.3%	12	10	-60.0%	4	-60.0%	10
Արմավիր	34	-44.1%	19	18.8%	16	16	18.8%	19	18.8%	16
Գեղարքունիք	19	-31.6%	13	-7.1%	14	11	-90.9%	1	-50.0%	2
Լոռի	17	-52.9%	8	2.0 անգամ	4	6	2.0 անգամ	12	33.3%	9
Կոտայք	24	50.0%	36	80.0%	20	46	0.0%	46	-41.8%	79
Շիրակ	4	0.0%	4	0.0%	4	2	2.0 անգամ	6	6.0 անգամ	1
Սյունիք	4	2.0 անգամ	8	4.0 անգամ	2	1	5.0 անգամ	5	25.0%	4
Վայոց Ձոր	13	-69.2%	4	-55.6%	9	0	1-ով ավել	1	0.0%	1
Տավուշ	18	-55.6%	8	33.3%	6	3	8.7 անգամ	26	85.7%	14
Հանրապետություն	199	-15.1%	169	14.2%	148	427	13.6%	485	-20.1%	607

Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.4-3

Գույքի տեսակ		Առուվաճառի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	1,234	8	4.7%	0.6%	254	52.4%	20.6%
2	Անհատական բնակելի տուն	637	16	9.5%	2.5%	30	6.2%	4.7%
3	Արտադրական նշ. շին	55	7	4.1%	12.7%	9	1.9%	16.4%
4	Հասարակական նշ. շին.	187	22	13.0%	11.8%	35	7.2%	18.7%
5	Ավտոտնակ	352	3	1.8%	0.9%	117	24.1%	33.2%
6	Հող	2,357	113	66.9%	4.8%	40	8.2%	1.7%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	939	78	46.2%	8.3%	22	4.5%	2.3%
Ընդամենը		4,822	169	100.0%	3.5%	485	100.0%	10.1%

Աղյուսակ 3.4-4-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2024 թվականի հուլիսի նկատմամբ.

Աղյուսակ 3.4-4

	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք					Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք					
	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս	
1	Բնակարան	5	60.0%	8	-11.1%	9	196	29.6%	254	-29.2%	359
2	Անհատական բնակելի տուն	24	-33.3%	16	45.5%	11	34	-11.8%	30	-16.7%	36
3	Արտադրական նշ. շին.	14	-50.0%	7	-50.0%	14	10	-10.0%	9	-59.1%	22
4	Հասարակական նշ. շին.	25	-12.0%	22	83.3%	12	36	-2.8%	35	45.8%	24
5	Ավտոտնակ	4	-25.0%	3	-57.1%	7	109	7.3%	117	-16.4%	140
6	Հող	127	-11.0%	113	18.9%	95	42	-4.8%	40	53.8%	26
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	79	-1.3%	78	0.0%	78	23	-4.3%	22	46.7%	15
Ընդամենը		199	-15.1%	169	14.2%	148	427	13.6%	485	-20.1%	607


### 3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2024 թվականի օգոստոսին անշարժ գույքի 328 առուվաճառքի գործարքների կողմն են հանդիսացել օտարերկրյա քաղաքացիները, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 6.8 %-ը:

Առուվաճառքի գործարքներից 133-ի դեպքում օտարերկրյա քաղաքացիները հանդիսացել են միայն գնորդ, 186-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 9 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիները:

Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2024 թվականի օգոստոսին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը.







Արդյունքում 2024 թվականի օգոստոսին օտարերկրյա քաղաքացիները գնել են 142 միավոր անշարժ գույք և վաճառել են 195 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2024 թվականի օգոստոսին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.5-3-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Գծապատկեր 3.5-2





Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը առուվաճառքների գործարքներում ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Աղյուսակ 3.5-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	1,302	58	40.8%	4.5%	54	27.7%	4.1%
Արագածոտն	382	17	12.0%	4.5%	13	6.7%	3.4%
Արարատ	479	4	2.8%	0.8%	21	10.8%	4.4%
Արմավիր	432	8	5.6%	1.9%	17	8.7%	3.9%
Գեղարքունիք	186	2	1.4%	1.1%	10	5.1%	5.4%
Լոռի	346	6	4.2%	1.7%	18	9.2%	5.2%
Կոտայք	897	37	26.1%	4.1%	28	14.4%	3.1%
Շիրակ	222	6	4.2%	2.7%	14	7.2%	6.3%
Սյունիք	175	0	0.0%	0.0%	6	3.1%	3.4%
Վայոց Ձոր	87	0	0.0%	0.0%	0	0.0%	0.0%
Տավուշ	314	4	2.8%	1.3%	14	7.2%	4.5%
Հանրապետություն	4,822	142	100.0%	2.9%	195	100.0%	4.0%

Աղյուսակ 3.5-2-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-2

	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
Երևան	81	-28.4%	58	-17.1%	70	74	-27.0%	54	-10.0%	60
Արագածոտն	12	41.7%	17	3.4 անգամ	5	24	-45.8%	13	-48.0%	25
Արարատ	4	0.0%	4	-42.9%	7	31	-32.3%	21	-12.5%	24
Արմավիր	6	33.3%	8	-38.5%	13	24	-29.2%	17	-34.6%	26
Գեղարքունիք	3	-33.3%	2	-75.0%	8	8	25.0%	10	11.1%	9
Լոռի	10	-40.0%	6	50.0%	4	28	-35.7%	18	-30.8%	26
Կոտայք	35	5.7%	37	3.4 անգամ	18	61	-54.1%	28	-28.2%	39
Շիրակ	6	0.0%	6	-33.3%	9	18	-22.2%	14	16.7%	12
Սյունիք	1	1-ով պակաս	0	2-ով պակաս	2	6	0.0%	6	-14.3%	7
Վայոց Ձոր	0	0.0%	0	2-ով պակաս	3	3	3-ով պակաս	0	2-ով պակաս	2
Տավուշ	1	4.0 անգամ	4	-55.6%	9	12	16.7%	14	-39.1%	23
Հանրապետություն	159	-10.7%	142	-4.1%	148	289	-32.5%	195	-22.9%	253

Աղյուսակ 3.5-3-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.5-3

Գույքի տեսակ	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1 Բնակարան	1,234	49	34.5%	4.0%	69	35.4%	5.6%
2 Անհատական բնակելի տուն	637	24	16.9%	3.8%	47	24.1%	7.4%
3 Արտադրական նշ. շին	55	0	0.0%	0.0%	1	0.5%	1.8%
4 Հասարակական նշ. շին.	187	9	6.3%	4.8%	1	0.5%	0.5%
5 Ավտոտնակ	352	11	7.7%	3.1%	6	3.1%	1.7%
6 Հող	2,357	49	34.5%	2.1%	71	36.4%	3.0%
6ա Ա/թ գյուղատնտ. նշ. հող	939	0	0.0%	0.0%	35	17.9%	3.7%
Ընդամենը	4,822	142	100.0%	2.9%	195	100.0%	4.0%

Աղյուսակ 3.5-4-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-4

		Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
		2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
1	Բնակարան	72	-31.9%	49	-12.5%	56	115	-40.0%	69	-27.4%	95
2	Անհատական բնակելի տուն	34	-29.4%	24	0.0%	24	78	-39.7%	47	-11.3%	53
3	Արտադրական նշ. շին.	1	1-ով պակաս	0	2-ով պակաս	2	0	1-ով ավել	1	0.0%	1
4	Հասարակական նշ. շին.	7	28.6%	9	125.0%	4	9	-88.9%	1	-66.7%	3
5	Ավտոտնակ	9	22.2%	11	-57.7%	26	7	-14.3%	6	-14.3%	7
6	Հող	36	36.1%	49	36.1%	36	80	-11.3%	71	-24.5%	94
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	0	0.0%	0	0.0%	0	44	-20.5%	35	-5.4%	37
<b>Ընդամենը</b>		<b>159</b>	<b>-10.7%</b>	<b>142</b>	<b>-4.1%</b>	<b>148</b>	<b>289</b>	<b>-32.5%</b>	<b>195</b>	<b>-22.9%</b>	<b>253</b>

Աղյուսակ 3.5-5-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված, իսկ Աղյուսակ 3.5-6-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի համամասնությունները ըստ պետությունների և տարածաշրջանների:

Աղյուսակ 3.5-5

Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ. նշ.	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	27	10	0	6	10	29	0	82
ԱՄՆ	2	1	0	1	0	5	0	9
Իրան	2	2	0	0	0	1	0	5
Միքիա	0	0	0	0	0	0	0	0
Եվրոպական պետություններ	12	7	0	2	0	10	0	31
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	4	2	0	0	0	0	0	6
Այլ պետություններ	2	2	0	0	1	4	0	9
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>49</b>	<b>24</b>	<b>0</b>	<b>9</b>	<b>11</b>	<b>49</b>	<b>0</b>	<b>142</b>

Աղյուսակ 3.5-6

Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ. նշ.	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	46	35	1	1	4	59	31	146
ԱՄՆ	13	3	0	0	1	6	2	23
Իրան	1	3	0	0	0	0	0	4
Միքիա	0	0	0	0	0	0	0	0
Եվրոպական պետություններ	3	2	0	0	0	1	0	6
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	5	4	0	0	0	4	2	13
Այլ պետություններ	1	0	0	0	1	1	0	3
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>69</b>	<b>47</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>6</b>	<b>71</b>	<b>35</b>	<b>195</b>

Աղյուսակ 3.5-7-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 3.5-7


Պետության անվանումը	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
Ռուսաստանի Դաշնություն	105	-21.9%	82	7.9%	76	219	-33.3%	146	-22.3%	188
ԱՄՆ	16	-43.8%	9	-74.3%	35	20	15.0%	23	53.3%	15
Իրան	8	-37.5%	5	66.7%	3	9	-55.6%	4	33.3%	3
Սիրիա	0	0.0%	0	0.0%	0	1	1-ով պակաս	0	1-ով պակաս	1
Եվրոպական պետություններ	17	82.4%	31	47.6%	21	19	-68.4%	6	-77.8%	27
ԱՊՀ պետություններ, քաղաքացիներ ՌԴ	6	0.0%	6	0.0%	6	11	18.2%	13	-13.3%	15
Այլ պետություններ	7	28.6%	9	28.6%	7	10	-70.0%	3	-25.0%	4
ԸՆԴԱՄԵՆԸ	159	-10.7%	142	-4.1%	148	289	-32.5%	195	-22.9%	253

### 3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2024 թվականի օգոստոսին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 1,234 գործարք: 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2024 թվականի հուլիսի համեմատ նվազել է 5.3 %-ով, 2023 թվականի օգոստոսի համեմատնաացել անփոփոխ:

Գծապատկեր 3.6-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի:

**Հանրապետությունում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը**



Աղյուսակ 3.6-1-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի օգոստոս և 2024 թվականի հուլիս ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 3.6-1


	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
Երևան	778	5.0%	817	-3.4%	846
Արագածոտն	9	-22.2%	7	-41.7%	12
Արարատ	37	-18.9%	30	-6.3%	32
Արմավիր	38	7.9%	41	-14.6%	48
Գեղարքունիք	22	40.9%	31	14.8%	27
Լոռի	97	-20.6%	77	13.2%	68
Կոտայք	130	-27.7%	94	-29.9%	134
Շիրակ	56	-10.7%	50	-10.7%	56
Սյունիք	38	2.6%	39	-25.0%	52
Վայոց ձոր	13	-46.2%	7	-30.0%	10
Տավուշ	16	2.6 անգամ	41	2.3 անգամ	18
<b>Հանրապետություն</b>	<b>1,234</b>	<b>0.0%</b>	<b>1,234</b>	<b>-5.3%</b>	<b>1,303</b>

3.6.2 Երևան քաղաքում 2024 թվականի օգոստոսին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 817 գործարք, 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2024 թվականի հուլիսի համեմատ նվազել է 3.4 %-ով, իսկ 2023 թվականի օգոստոսի համեմատ՝ աճել 5.0 %-ով:

Երևան քաղաքում 2024 թվականի օգոստոսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափ՝ 20.0-%, արձանագրվել է Արաբկիր, իսկ առավել ցածրը՝ 0.4 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.6-2-ում ներկայացված է 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.6-2



Աղյուսակ 3.6-2-ում ներկայացված են 2024 թվականի օգոստոսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների:

Աղյուսակ 3.6-2

Վարչական շրջան	2023 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի օգոստոս	փոփոխումը	2024 թվականի հուլիս
Կենտրոն միջին	840,300	7.5%	903,050	0.3%	900,000
Կենտրոն (Գոտի 1)	1,068,000	4.4%	1,115,500	0.4%	1,111,100
Կենտրոն (Գոտի 2)	880,400	6.5%	938,000	0.2%	936,500
Կենտրոն (Գոտի 3)	763,100	9.6%	836,500	0.1%	835,500
Կենտրոն (Գոտի 4)	609,100	14.8%	699,100	0.3%	697,100
Կենտրոն (Գոտի 5)	530,100	13.6%	602,000	0.0%	601,700
Արաբկիր միջին	593,200	6.5%	631,700	0.5%	628,500
Արաբկիր (Գոտի 3)	615,500	8.3%	666,500	0.9%	660,500
Արաբկիր (Գոտի 4)	562,300	9.0%	613,000	0.0%	613,000
Արաբկիր (Գոտի 5)	630,100	5.9%	667,500	0.6%	663,500

Արաբկիր (Գոտի 7)	455,000	13.6%	517,000	0.4%	515,000
Քանաքեռ-Զեյթուն միջին	404,000	9.0%	440,500	0.5%	438,500
